Արձանագրություն թիվ 12

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

7 հուլիսի 2017թ. ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Կիրառական արվեստի ֆակուլտետի խորհրդի ընդլայնված նիստին մասնակցում էին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն Ա.Ս.Առաքելյանը, գիտական խորհրդի անդամները, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը և կուրսերի ավագները:

Օրակարգ

1. 2016-17ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ամփոփում:/առանց լուծարքի/
2. Ամփոփիչ քննության , ավարտական և կուրսային աշխատանքների պաշտպանության հաշվետվության քննարկում:
3. Մասնագիտության պատասխանատուի հաշվետվության ներկայացում:
4. Մասնագիտության կրթական ծրագրում կառուցվածքային ու բովանդակային փոփոխությունների քննարկում և ներկայացում մասնաճյուղի գիտական խորհուրդ:
5. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Ա.Շ.Մարգարյանը ներկայացրեց 2016-2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ստուգարքների և քննությունների արդյունքները և նշեց, որ ստուգարքները և քննությունները անց են կացվել համաձայն հաստատված գրաֆիկի:Ֆակուլտետի բոլոր 60 ուսանողները մասնակցել են քննաշրջանին: Ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը կազմում է 89,83% /անվճար-100%, վճարովի 85,00%/, իսկ ըստ կուրսերի պատկերը հետևյալն է՝ “Կիրառական արվեստ” երկրորդ կուրս /7ուսանող 85,71%/, ”Դիզայն” առաջին կուրս /7ուսանող 100%/, “Կիրառական արվեստ” երրորդ

կուրս/7ուսանող 85,71%,/ “Կիրառական արվեստ” չորրորդ կուրս /16 ուսանող 80,00%, մեկ ուսանող ունի առարկայական պարտք/: Չորրորդ կուրսի ուսանողները ավարտական աշխատանքները և ամփոփիչ ատեստավորումը հանձնել են 100 % առաջադիմությամբ: Գնահատականների սպեկտրը լայն է և որպես կանոն ավելի բարձր է մասնագիտական բլոկի առարկաներից և ավելի ցածր հումանիտար և ոչ մասնագիտական առարկաներից:

Ֆակուլտետում իրականացված բոլոր ստուգարքները և քննությունները վերահսկվել են ինչպես ֆակուլտետի ադմինիստրացիայի, այնպես էլ ուսումնամեթոդական վարչության կողմից, իսկ մասնագիտական բոլոր քննությունները ֆակուլտետում կազմված հանձնաժողովի կողմից գնահատվել և քննարկվել են ուսանողների հետ, իսկ համապատասխան բողոք առաջարկները արձագանքվել են տեղում: Հանձնաժողովի կազմի մեջ էր դեկանը, մասնագիտության պատասխանատուն, ամբիոնների վարիչները, հարակից առարկայի դասախոսը:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-</u> Հ.Ասատրյանը, Մ.Հարությունյանը, Ա.Չիբուխչյանը, որոնք նշեցին առանձին ուսանողների ովքեր ցուցաբերել են ցածր առաջադիմություն և ունեն երկուսից ավելի ակադեմիական պարտքեր:

<u>Որոշեցին-</u> Հանձնարարել մասնագիտության պատասխանատուին ձեռնարկել միջոցառումներ ակադեմիական պարտքեր ունեցող ուսանողների խնդիրները վերացնելու համար:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ դեկանի ժ/պ Ա.Շ.Մարգարյանը:Մասնավորապես նշվեց, որ չորրորդ կուրսի 16 ուսանողներից ամփոփիչ ատեստավորմանը և ավարտական աշխատանքների պաշտպանությանը մասնակցել են 15 ուսանողներ /մեկ ուսնառ ձևակերպել է ֆիզիոլոգիական արձակուրդ/:

Պետական քննական հանձնաժողովի նախագահի հաշվետվությունից կցանկանայի առանձնացնել „Արվեստի պատնմություն” առարկայի ուսանողների իմացության ցածր մակարդակի վերաբերյալ գրառումը, որը մտահոգության տեղիք է տալիս և պարտադրում իրականացնել հստակ գործողություններ՝ հաջորդ տարիների շրջանավարտների մոտ այդ բացթողումը վերացնելու համար:

Ավարտական աշխատանքների մասին նշվեց, որ ցանկալի /նույնիսկ պարտադիր/ կլիներ մտահղացումներն ու աշխատանքների էսքիզները լինեն սեփականը, ինչ վերաբերվում էր կատարողականին, մեծ թվով ուսանողների մոտ բարձր վարպետությամբ էր իրականացված:

Կուրսային աշխատանքներ այս ուսումնական տարում ունեցել են ,,Կիրառական արվեստ'' մասնագիտության երկրորդ և երրորդ կուրսի ուսանողները, որոնք իրականացրել են բազմաբնույթ աշխատանքներ՝ կախված ղեկավարների և իրենց համատեղ մտահղացումներից: Երկրորդ կուրսի մեկ ուսանող՝ Տիգրան Խաչատրյանը կուրսային աշխատանք չի ներկայացրել:Այստեղ նույնպես ուշադրություն դարձվեց և բարձր գնահատականների արժանացան ստեղծագործական աշխատանքները:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ տեղակատվությամբ հանդես եկավ Դիզայն կրթական ծրագրի պատասխանատու Ա.Լ.Չիբուխչյանը:

Հարգելի կոլեգաներ , Ձեզ եմ ներկայացնում 2016-2017 ուսումնական տարում Դիզայն կրթական ծրագրի ղեկավարի կողմից իրականացված աշխատանքների հաշվետվությունը ՝ հիմք ընդունելով բակալվրի կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը.

- Հանդիպում առաջին կուրսեցիների հետ, իրազեկում կրեդիտային համակարգի, գնահատման ձևի, պայմանագրերի կնքման գործընթացի կազմակերպում, գործող զեղչային համակարգի ծանոթացում:
- Ծանոթացում ուսումնական պլանով նախատեսված դասընթացների հետ:
- Ընթացիկ քննությունների և ստուգումների գրաֆիկների քննարկում:
- Ընթացիկ հարցաշարերի քննարկում , վերանայում:
- Ուսումնական պրոցեսի և քննությունների վերահսկում:
- Առարկայական ծրագրերի և փաթեթների առկայության և բովանդակության վերահսկում:

- Դասալսումների իրականացում:
- Ծանոթացում կամընտրական առարկաների բովանդակության և ընտրման կարգին:
- Կուրսային և ավարտական աշխատանքների թեմաների հաստատում և ընթացքի հսկողություն:
- Ամբիոնի վարիչների և դեկանի հետ համատեղ 2017-2021 ուսումնական պլանի կառուցվածքային և բովանդակային փոփոխման մասնակցություն:
- ԵՊՀ-ի կողմից ուսումնական գործընթացի կազմակերպման նորմատիվների փոփոխությունների իրազեկում ամբիոնների աշխատակիցներին և համապատասխան փաստաթղթերում դրանց իրականացում:
- Դիզայն կրթական ծրագրի վերջնարդյունքների մշակում արդի պահանջներին համապատասխան:

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ տեղակատվությամբ հանդես եկավ Ա.Շ. Մարգարյանը, որի ընթացքում նշվեցին նախորդ նիստում քննարկված ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածությունները: Մասնավորապես ըստ կիսամյակների և կրթական մոդուլների յուրաքանչյուր դասավանդող իրազեկվեց իր կողմից իրականացվելիք առարկաների և նրանց ներկայացվող պահանջներին,կարևորվեց միջառարկայական կապի կարևորությունը:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -</u> Ամբիոնների բոլոր դասախոսները վերջնական ճշտումներ արեցին ինչպես դասավանդման տեխնոլոգիաների կիրառման, այնպես էլ կրթական մոդուլների ժամաքանակների փոփոխության և գնահատման նոր գործընթացի վերաբերյալ:

<u>ՈՐՈՇԵՑԻՆ-</u> Հանձնարարել ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմին մինչև ս/թ օգոստոսի 25-ը վերանայել նախկինում կազմված

առարկայական ծրագրերը և անհրաժեշտության դեպքում կատարել փոփոխություններ կրթական ծրագրի արդյունավետությունը բարելավելու նպատակով:

Օրակարգի հինգերորդ հարցի վերաբերյալ ֆակուլտետի գիտական խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը ներկայացրեց ,,Դիզայն" և ,,Համակարգչային գրաֆիկա" կրթական ծրագրերի առաջին կուրս միավորման հարցը, որը ծագել է դասավանդման և արդյունավետության մի շարք խնդիրներից, քանի որ ,,Համակարգչային գրաֆիկա" կրթական ծրագրի ուսանողները /թվով 3 ուսանող/ ցանկություն են հայտնել իրենց ուսումնառությունը շարունակել ,,Դիզայն'' կրթական ծրագրով:Քանի որ նշված երկու կրթական ծրագրի շրջանավարտներին շնորհվելու է ,,Դիզայնի" բակալավրի որակավորում , ուստի կարելի է ընդառաջել ուսանողներին և թույլատրել երկրորդ կուրսից շարունակել ուսումնառությունը ,,Դիզայն'' կրթական ծրագրով:Այնուհետև նշվեց , որ առաջին կուրսում կրթական մոդուլների տարբերություններ են առաջացել, որոնք առաջիկա կիսամյակում պետք է լրացվեն այդ բացը վերականգնելու համար:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-</u> ամբիոնի վարիչները առաջարկեցին ,,Համակարգչային գրաֆիկա" կրթական ծրագրով առաջին կուրսի ուսանողների համար լրացուցիչ կազմակերպել լրացուցիչ դասընթացներ վերը նշված տարբերությունները հանձնելու համար:

<u>ՈՐՈՇԵՑԻՆ-</u> Դիմել մասնաճյուղի ուսումնամեթոդական վարչության՝ թույլատրություն ստանալու և համապատասխանության դեպքում պատրաստել անհրաժեշտ փաթեթ ,,Համակարգչային գրաֆիկա" կրթական ծրագրով ուսանողներին ,,Դիզայն '' կրթական ծրագիր տեղափոխելու համար:

Ընթացիկ հարցերից կարևորվեց նաև արվեստանոցների գույքի խնամքը, տեխնիկական միջոցների տարեվերջյան սպասարկումը և գույքագրումը:

Վերջում Ա.Շ. Մարգարյանը աշխատակիցներին հաճելի ու բովանդակալից ամառային հանգիստ ցանկացավ և ամփոփեց նիստը:

ՆԱԽԱԳԱՀ **Ա. Շ.Մարգարյան**

ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ք.Հ.Մխիթարյան**